«Պրոկոֆեւի թոռը իր հավանությունն է տվել փոխադրությանը»

Ամենակարևոր լուրերը Հայաստանից՝ Telegram-ում

Հուլիս 13,2022 13:30 102

Հավանել 31 Կիսվել

Հարցազրույց կանադահայ ջութակար Ռուբեն Կոսեմյանի հետ

– Ռուբեն, խնդրում եմ ներկայացնել Ձեր նոր ձայնասկավառակը, ի՞նչ է այն ներառում:

– Նոր ձայնասկավառակի մեջ ընդգրկված են Բրամսի ջութակի 3 Սոնատներ եւ Սկերցոն, որը սկզբնականում գրվել էր որպես Ջութակի սոնատի 3-րդ մաս: Այդ սոնատը 3 կոմպոզիտորի՝ Շումանի, Բրամսի եւ Դիտրիխի ընդհանուր գաղափարն էր՝ նվիրված հայտնի ջութակահար Յ. Յոահիմին, որտեղ Դիտրիխը 1-ին մասի հեղինակն է, Շումանի գրչին պատկանում են 2-րդ եւ 4-րդ մասերը, իսկ Բրամսին՝ 3-րդ մասը:

ADVERTISING

Իտալիայի 1 փ., 010 591188

Գրանցվի՛ր հիմա

POOL
BY CONGRESS

Ad by NATIVE NETWORK

– Տեղյակ ենք, որ Պետերբուրգյան նախագծեր էլ կան, խնդրում եմ որոշ «փակագծեր» բացեք:

– Առաջին նախագիծը վերաբերում է իմ՝ ջութակի եւ դաշնամուրի համար փոխադրությունների երկրորդ եւ երրորդ ժողովածուի տպագրմանը: Երկրորդ նախագիծը՝ Պրոկոֆեւի «Ռոմեո եւ Ջուլիետ» բալետից 6 դրվագների փոխադրության տպագրումն է, որը նույնպես իրագործվելու է Սանկտ Պետերբուրգի հայտնի տպագրատան կողմից:



– Որքանով տեղյակ եմ՝ կատարել եք 72 նյութերի փոխադրություններ, ո՞ր կոմպոզիտորների ստեղծագործությունների մասին է խոսքը:

– Փոխադրել եմ տարբեր ժամանակաշրջանների եւ ուղղությունների ներկայացուցիչ կոմպոզիտորների ստեղծագործություններ, կոմպոզիտորների թվում են՝ Սկարլատին, Շուբերտը, Լիստը, Շումանը, Մոշկովսկին, Չայկովսկին, Սկրյաբինը, Ռախմանինովը, Ռավելը, Գերշվինը: Հատուկ տեղ ունեն հայ կոմպոզիտորները՝ Կոմիտասը եւ Բաբաջանյանը:

– Առաջիկայում ի՞նչ համերգներ եք պլանավորել:

– Տպագրվելուց հետո պետք է կատարվեն Պրոկոֆեւի Տրանսկրիպցիաները «Ռոմեո եւ Ջուլիետ» բալետից, նախատեսվում են նաեւ համերգներ Եվրոպայում:

– Հայաստանի հետ կապված ի՞նչ ծրագրեր ունեք:

– Իմ 72 փոխադրությունները ուզում եմ տպագրել Հայաստանում: Պլանավորում եմ թողարկել ձայնասկավառակ, նվիրված հայ հռչակավոր կոմպոզիտորների 100-ամյակին, որտեղ կընդգրկվեն Ղ. Սարյանի, Ա. Բաբաջանյանի, Է. Միրզոյանի, Գ. Հովունցի ստեղծագործությունները:

– Խնդրում եմ նաեւ Պրոկոֆեւի թոռան հետ համագործակցությանն անդրադառնաք:

– Ս. Պրոկոֆեւի «Ռոմեո եւ Ջուլիետ» բալետից 6 համարների փոխադրությունը ջութակի եւ դաշնամուրի համար, մեծ աշխատանք եւ առանձնահատուկ լուծումներ պահանջեց: Ընթացքում կապ ստեղծվեց Ս. Պրոկոֆեւի՝ արտերկրում բնակվող ժառանգների հետ, մասնավորապես՝ կոմպոզիտոր Գաբրիել Պրոկոֆեւի հետ: Նա իր հավանությունն է տվել փոխադրությանը, նշելով, որ այն հետաքրքիր եւ չափազանց գրագետ է արված, հետաքրքրվել է նաեւ, թե ինչպես են ընտրվել դրվագները եւ ինչպիսին է փոխադրության հիմնական գաղափարը: Հույս ունեմ՝ այս համագործակցությունը ապագայում կընդլայնվի:

Զրուցեց Գոհար ՀԱԿՈԲՅԱՆ

«Առավոտ» օրաթերթ
12.07.2022

Ամենակարևոր լուրերը Հայաստանից՝ Telegram-ում

Հուլիս 13,2022 13:30

Հավանել 31 Կիսվել

Share Tweet

ԲԱԺԻՆՆԵՐ՝ «Առավոտ» օրաթերթ , Մշակույթ

38,669 այցելություն, 2023-05-24-ին
ըստ Google Analytics-ի:

«Բիզնես» խորագրում հրապարակված նյութերը զովազդային բնույթի են:
© 1998 - 2023 Առավոտ – Լուրեր Հայաստանից

Website is made by Peyotto Technologies Lab.

Հրապարակման կանոններ Գովազդի պայմաններ Էթիկայի վարքականոն Հասցե եւ հեռախոսներ Աշխատակազմ